

«Երեկոյան Երեւանի» անցած տարվա փետրվարի 15-ի համարում տպագրվեց Արտաշես Քալանթարյանի «Երանի այն օրը...» հոդվածը, որը շնորհալի լրագրողի, հրապարակախոսի, գրողի, թատերագրի կարապի երգը եղավ... Մեկ շաբաթ հետո անժամանակ մահը նրան խլեց մեր շարքերից, թույլ չտալով իրականացնել ստեղծագործական այն մտահղացումները, որ նա ուներ:

Այսօր, մեր գործընկերոջ մահվան տարելիցի կապակցությամբ, ընթերցողներին ենք ներկայացնում մի հատված նրա «Ես իջնում եմ ձորը» անավարտ վիպակից, որ մեր խնդրանքով խմբագրությանը տրամադրեց Արտաշես Քալանթարյանի այրին:

«ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՒԱՆԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՍ ԻՋՆՈՒՄ ԵՄ ՁՈՐԸ

(ՀԱՏՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՎԻՊԱԿԻՑ)

- Ժողովուրդն ամենաճիշտ ձեռակերպումն է տվել, - ծիծաղեց իմ բժիշկ ընկեր Արմենը: - Մինչև քառասուն տարեկան դառնալը մարդիկ ամեն ինչ անում են իրենց առողջությունը քայքայելու համար, իսկ հետո հիվանդանում են ու բուժվում մինչև մահ:

Մենք նստած էինք հիվանդանոցի շենքի ստորոտում, Հրազդանի ձորի մոտ գտնվող բացօթյա տաղավարում ու սուրճ էինք խմում:

- Ճիշտ է, չէ՞, քո օրինակը նույնը չէ՞...

Նա ինձ վաղուց գիտի, հարյուր անգամ չափել է ճնշումս ու ծալած ցուցամատով թխլթխկացրել կրծքիս, հազար անգամ ասել է՝ շնչիր ու պահիր շնչառությունդ, առանց հատուկ սարքերի օգնության գիտի, թե ինչ է կատարվում իմ ներսում եւ սովորաբար ամեն ինչի մասին խոսում է ինձ հետ, բացի իմ առողջական վիճակից:

Բայց այդ օրը չգիտես ինչ էր պատահել նրա հետ.

- Հա, իսկ Գուրգենը ինչ ասաց...

Գուրգենը մեր հիվանդանոցի բժիշկներից է, որը ճապոնական սարքերով հիվանդների ներքին օրգաններն է ուսումնասիրում:

- Շատ ուրախացավ, որ երկար չարչարվելուց հետո կարողացավ երիկամներիս մեջ քար հայտնաբերել:

Արմենը ժպտաց:

- Ինչո՞ւ ես ուրախանում, Գուրգեն ջան, - ասացի: - Դա ի՞նչ մի ուրախանալու բան է: Այնպիսի մի հրճվանքով ես հայտարարում, որ քիչ է մնում մաղարիչ ուզես: Այնինչ դա բավականին վտանգավոր բան է, չէ՞...

Արմենը սկսեց ծիծաղել.

- Հետո՞, հետո՞ ...

Երեւի շատ ազդվեց, որովհետեւ կարմրեց ու անմիջապէս աշխատեց մխիթարել ինձ:
Վարպետ, ասաց, մի անհանգստացե՛ք, ձեր սիրտն այնքան վատ վիճակում է, որ դժվար թէ
հարցը երիկամին հասնի...

Արմենը քրքչաց, ափսեի մեջ դրեց սիգարետն ու բաժակը եւ իրար խփեց ձեռքերը:

- Դե ուրեմն լսիր հաջորդ ճշմարտությունը: Եթէ քեզ մի բան փրկի, միայն հումորը կփրկի: Դու
իրոք ուրիշ փրկություն չունես:

- Շնորհակալություն, - ասացի եւ, - լրիվ հանգստացա, Արմեն ջան... Գուրգենն ու դու իրար
արժեք...

Մեր կողքով թշնամուց փախչող զինվորների նման՝ փնչալով եւ հեւալով, վազողների հոգնած
ու անկարգ մի խումբ անցավ եւ իջավ դեպի մանկական երկաթուղի: Տարբեր տարիքի ու
հասակի մարդիկ էին, տարբեր հագնված, իսկ ոմանք էլ նույնիսկ ոտաբոբիկ: Եկան, հեւացին,
անցան ու դանդաղ-դանդաղ անհետացան ձորը տանող ճանապարհի կեռմանի հետեւում:

- Ես էլ չգնա՞մ նրանց հետ, - հարցրեցի Արմենին, - մյուս պտույտին, որ հայտնվեն, վազեմ,
միանամ նրանց ու իջնեմ դեպի ձորը: Հը՞ ...

Սպասում էի, թէ բժիշկը կծիծաղի: Բայց նա հանկարծ ինձ նայեց չափազանց լուրջ, նույնիսկ
սեւեռուն հայացքով, ասեւ մեկ անգամ եւս տնտղելով բազմաչարչար սիրտս ու թոքերս.

- Լսիր, բայց դու խելոք բան ես ասում, գիտե՞ս... Եթէ մտքովդ անցնում է, եթէ կարող ես՝ գնա
նրանց հետ... Բա ի՞նչ...

Ես զարմացած նրան նայեցի: Ու թեւեւ հոգով վաղուց նախապատրաստված եմ ամեն ինչի,
բայց զգացի, որ սիրտս կծկվեց ցավից.

- Սա այն դե՞պքն է, երբ ասում են՝ հիվանդի սիրտն ինչ ուզում է՝ տվեք...

Արմենը խուսափեց ուղիղ պատասխանից.

- Ամենահետաքրքիրն այն է, որ երկուսս էլ միաժամանակ նույն բանը մտածեցինք, թեւեւ դու
կատակով, իսկ ես՝ լուրջ: Եւ գիտե՞ս ինչը ինձ հուշեց այդ միտքը: Երեք տարի առաջ մի
շինվարչության պետ էր պառկած մեզ մոտ: Սոցիալիստական աշխատանքի հերոս էր,
դեպուտատ... Մեզ չէին վստահում, պրոֆետորներ էին հրավիրում այստեղից ու այնտեղից:
Վերջում նույնիսկ աշխարհահռչակ Լադիգինին բերեցին Լենինգրադից: Նայեց, նայեց ու
ասաց. «Բժշկության մեջ ինձ հայտնի ոչ մի միջոց նրան այլեւս օգնել չի կարող: Մի չարչարեք
զուր տեղը... եւ մի արեք ոչինչ... Թող ապրի, որքան կարող է...»:

- Հետո՞, - հարցրեցի եւ:

Արմենը մի նոր սիգարետ վառեց.

- Ճիշտն ասած, հետաքրքրության համար ես էլ ուսումնասիրեցի նրա հիվանդության պատմությունը, կարդացի վերջին հետազոտությունների տվյալները... իրոք որ բացարձակապես անհուսալի դեպք էր:

- Հետո՞, Արմեն, - հեւացի ես՝ սկսելով զայրանալ... - Սա ի՞նչ սաղիզմ է:

- Քիչ առաջ մեր կողքով վագոդների մեջ վերջինն էր, աչքովդ չընկա՞վ, սպիտակ, ցանցառ մազերով ծերուկ է, նեգրի պես սեւ... Վերջինն էր, բայց վագում էր: Եւ կարծես դիտմամբ ամեն օր մեր հիվանդանոցի կողքով է վագում:

Ես հետ ընկա աթոռի թիակին ու թեթեւացած շունչ քաշեցի:

* * *

Վագելու մասին, իհարկե, նույնիսկ կատակով խոսել չէր կարելի, որովհետեւ ես հազիվ էի քայլում: Շունչս կտրվում էր: Հենց մոռանում էի մի պահ ու ականա թեթեւակի արագացնում քայլերս, մեկն ասես ձեռքը սրտիս դներ, սեղմեր ու ասեր՝ կանգ առ: Ու ես կանգ էի առնում, հենվում որեւէ ծառի եւ շաղված աչքերով նայում շուրջս արագ ու անհոգ անցուդարձ անող մարդկանց, հատկապես ինձնից տարիքով մեծերին ու ընդհատ-ընդհատ շնչելով եւ շնչասպառ լինելով, դառնությամբ ու, հա, հա, ինչ ուզում եք՝ ասեք, հենց նախանձով մտածում, թե սա ի՞նչ անարդարություն է, ի՞նչ անխղճություն է, բոլորը կարող են քայլել, իսկ ես՝ չէ: Ինչո՞ւ, ինչի՞ համար:

Լավ, հասկացանք, կքայլեմ: Բայց մեր Մարոյին ինչպե՞ս բացատրեմ, թե ինչու՞ եմ ընտրել հատկապես Հրազդանի կիրճը: Կասի՞ քայլելու համար Խանջյանի փողոցից պիտի գնաս այնտե՞ղ հասնես, իջիր բակում քայլիր՝ աչքիս առաջ, վերջապես գնանք մեր տան կողքի Շատրվանների այգում միասին քայլենք: Թե կասի, գուցե Հրազդանի ձորում քեզ սպասող էր կա...

Ճիշտն ասած՝ ինձ դուր է գալիս, որ օր ծերության Մարոն ինձ խանդում է: Բայց հետն էլ ծիծաղս է գալիս, ես հազիվ եմ շարժվում, իսկ նա ինձ խանդում է: Այն ժամանակ, երբ իրոք արժեր ինձ խանդել եւ սահմանափակել իմ ազատությունները, Մարոյի ուշքն ու միտքը երեխաներն էին: Նրանց էր խիստ հսկողության տակ պահում: Իսկ հիմա, երբ ամուսնացել ու ցրվել են, նոր է ինձ հսկողության տակ վերցրել: Եթե այն ժամանակ այսպես հսկեր ու հետեւեր ինձ, ո՞վ զիտե, գուցե թե այսքան շուտ դուրս չգայի շարքից, եւ ես էլ կարողանայի վազել Հրազդանի ձորում՝ գոնե բժիշկների կողմից վաղուց դատապարտված այն ծեր շինարարի նման:

Բայց հարցը միայն դա չէր: Հարցն այն էր նաեւ, որ ժամանակին, ամեն անգամ ավտոմեքենայով Հրազդանի կիրճով անցնելիս, ես՝ Մարոյի ու երեխաների ներկայությամբ, ծիծաղում էի ձորում մարզանք անող կամ այս ու այն կողմ վագոդ մարդկանց վրա:

- Մարդ ինչքան պետք է անլուրջ ու պարապ լինի, որ բան ու գործը թողած՝ թափառի այս ձորերում:

Ես ձորի այդ մարդկանց բառիս ե՛ւ բուն, ե՛ւ փոխաբերական իմաստներով միշտ վերելից էի նայում եւ մտածում էի, որ նրանք, այնուամենայնիվ, թերարժեք մարդիկ են: Անպայման: Նորմալ կյանքով ապրող մարդը ի՞նչ գործ ունի այս ձորերում:

Իսկ հիմա, բախտի դառը քմահաճույքով, ես եմ հայտնվելու ձորում, եւ ինձ նման մեկը վերելից ծաղրանքով ինձ է նայելու, թոթովելու է ուները եւ ասելու է ավտոմեքենայի մեջ նստած իր կնոջն ու զավակներին՝ «Լավ, այս մարդը բան ու գործ չունի՞ ... Հաստատ դրա ինչ-որ տեղը պակաս է, չէ՞»:

Չէ, վճռեցի ես, Մարոյին չեմ ասի, որ Հրազդանի կիրճ եմ գնում: Առավոտ շուտ վեր կկենամ, կհագնեմ մարգահագուստս ու կասեմ, թե գնում եմ Շատրվանների այգի՝ զբոսնելու...